Հավելված N 2
2024 թվականի հունվարի 22-ին կնքված
1032-11003/24-ԵՑ-2 պայմանագրի

**ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 3**

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի տրամադրում և սոցիալապես անապահով անձանց սննդի կազմակերպում» |
| Դրամաշնորհի N | Լոտ 2. Երևան - 2 ցերեկային կենտրոն |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2024-31.12.2024թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.07.-30.09.2024թթ. |
| Ներկայացման օր | 01.10.2024թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Մարգարիտ Հովհաննիսյան<br>սոցիալ-առողջապահական ծառայությունները համակարգող |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խոհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում,
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- Սոցիալ-հոգեբանական օգնության տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողը անհատական և խմբային աշխատանքների միջոցով հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրել 51 շահառուի, իրականացվել է շահառուների կարիքների գնահատում և վերագնահատում: Հաշվետու ժամանակահատվածում շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով իրականցվել է 7 ուղղորդում, միջամտություն/միջնորդում այլ կառույցներ:
  Իրավաբանական խորհրդատվության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ:
- Հաշվետու ժամանակահատվածում ցերեկային կենտրոնում կազմակերպվել է շահառուների ժամանցը՝ մանր և խոշոր մոտորիկայի, ուշադրության կենտրոնացման, հիշողության զարգացմանն ուղղված խաղերի, ակտիվացնող վարժությունների, կապերի ընդլայնման, հեռուստադիտումների, ընթերցանության և դրանց համապատասխան քննարկումների իրականացման միջոցով:
  Կենտրոնում գործել է շահառուների հետաքրքրություններին համապատասխանող 8 խմբակ՝
  - Հայ եկեղեցու պատմություն, կերպարվեստ,
  - Կինեզոլոգիա,
  - Հմուտ ձեռքեր,
  - Երգ,
  - Խոհարարական,
  - Առողջապահական,
  - Գրական,
  - Քննարկումների ակումբ:

  Խմբակներին մասնակցել է 51 շահառու:

  Կազմակերպվել է թվով 37 մշակութային միջոցառում, որոնց մասնակցել է 51 շահառու: Իրականացված միջոցառումներն են.
  - Հանդիպումներ քահանայի հետ
  - Սուրբ Աստվածամոր վերափոխման տոն
  - «Հմուտ ձեռքեր» խմբակի ցուցահանդես
  - Ծննդյան տարեդարձի նշում
  - Էքսկուրսիա՝ Մուղնու Սբ.Գևորգ եկեղեցի, Ծաղկեվանք, Դրոյի գերեզման, Ապարանի տառերի պուրակ:

- Էքսկուրսիա՝ Առինջի Լեվոնի Աստվածածին քարանձավ, Առինջի Գետարգելի եկեղեցի, Գ.Ծառուկյանի Սբ.Հովհաննես եկեղեցի, Պողոս-Պետրոս, Ջրվեժի Սբ. Կաթողիկե եկեղեցի:
- Էքսկուրսիա՝Վաղարշապատ, Սբ. Հռիփսիմե, Սբ. Շողակաթ, Սբ. Գայանե, Էջմիածին մայրավանք, Զվարթնոց
- Էքսկուրսիա՝ Սեվանա լիճ, Հայրավանք վանական համալիր
- Էքսկուրսիա՝ Լոռի, Վանաձորի Սբ. Ամենակատար եկեղեցի, Ստեփանավան, Դենդրոպարկ, Ջրաշուշանների լիճ, Սբ.Նիկոլայ Եկեղեցի
- Էքսկուրսիա՝ Դիլիջան, Հաղարծին, Գոշավանք:
- Էքսկուրսիա՝ Նորավանք, Գնդեվանք, Ջերմուկ:
- Էքսկուրսիա՝ Սեվան,Նորատուս խաչքարեր,Հայրիվանք, գ.Բերկունքի լողափ:
- Էքսկուրսիա՝ Թալին, Դաշտադեմ ամրոց, Սբ. Կաթոլիկե եկեղեցի:
- Ա.խաչատրյան համերգասրահ, կինոերաժշտություններ ազգային հնչյուններով:
- Ա.խաչատրյան համերգասրահ, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ:
- Ա.խաչատրյան համերգասրահ, Հայաստանի «Ալթունյան» պետական անսամբլ: Հայկական մշակութային ժառանգությունը:
- Կոմիտասի անվան կամերային երաժշտության տուն, երգեհոնային երաժշտության համերգ:
- Առնո Բաբաջանյան համերգասրահ, Ջիվանու անվան աշուղական դպրոցի դասարանի սաների համերգ-երեկո:
- Հայաստանի «Բարեկամություն» պետական անսամբլի համերգ, միջազգային պարեր:
- Ա.Բաբաջանյան համերգասրահ, «Ակունք» ազգագրական համույթի համերգը, հայն ու հայկականը,
- Սիֆոնիկ Մանսուրյան, երաժշտություն գրված ֆիլմերի համար,
- Արամ Խաչատրյան համերգասրահ, «Սասունցի Դավթի ծնունդը», Կարպիս Աֆրիկյան,
- Կամերային երաժշտության տունը՝ «Նարեկացի» արվեստի միության 20-ամյակին նվիրված համերգ-ցուցահանդես:
- Ա.Խաչատրյան համերգասրահ, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ, «Արմենիա» միջազգային փառատոնի բացման համերգը:
- Հաղթանակ զբոսայգի, «Տարազի ֆեստ» քաղաքային զբոսաշրջային փառատոն, կազմակերպվել էր Վ. Տերյան մշակութային կենտրոնի կողմից
- Կասկադի այգում «Գութան 2024», հայկական ազգային երգ ու պարի ամենամյա փառատոն
- Ազատության հրապարակ, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի համերգ,
- Սիրահարների այգի, «Երաժշտական էքսպեդիցիա» միջազգային նախագիծ. բացօթյա դասական համերգ:
- Գառնիի տաճար «Երաժշտական էքսպեդիցիա» միջազգային նախագիծ. բացօթյա համերգ, Շ.Ազնավուրի երգերի ջազային կատարումներ:
- Երեվանի Հրաչյա Ղափլանյանի անվան Դրամատիկական թատրոն, ներկայացման դիտում՝ «Մեծ լռություն»:
- Երեվանի Հրաչյա Ղափլանյանի անվան Դրամատիկական թատրոն, ներկայացման դիտում «Վարչապետի խորհրդականը, ընդդիմության առաջնորդի քարտուղարուհին եւ դիակը»:
- Երեվանի Հրաչյա Ղափլանյանի անվան Դրամատիկական թատրոն: «Եկեք անկեղծ խոսենք» ներկայացման դիտում:
- Գաբրիել Սունդուկյանի անվան թատրոն: «Իշամեղու» ներկայացման դիտում:

- Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքային/արտթերապիայի շրջանակներում կազմակերպվել է թվով 15 հանդիպում (մասնակիցների թիվ՝ 31) ուղղված նյարդային լարված վիճակի թուլացմանը, դրական հույզերի ու մտքերի վրա կենտրոնացմանը, հույզերի բացահայտմանը գույների միջոցով, շարժումների կոորդինացիային, տեսատարածական ընկալմանը, մանր շարժողականությանն ու ուշադրության կենտրոնացմանը:
Արտթերապիա, վիզուալիզացիա, նեյրոբիկ վարժություններ, պարաթերապիա, հիշողությունը եվ ուշադրությունը ակտիվացնող խաղ-վարժանքներ: Աշխատանք մտքի հետ՝ լավատեսության

վերաբերյալ զրույցներ, շնչառական վարժություններ, հույզերի հետ աշխատանք, ինտելեկտուալ խաղեր:

- Կենտրոնում սննդի տրամադրման շրջանակներում յուրաքանչյուր օր սննդային 2 ընդմիջում է կազմակերպվել:
- Թվով 1 շահառու օգտվել է բաղնիքի ծառայությունից:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը.

- Էքսկուրսիա՝ Մուղնու սբ.Գևորգ եկեղեցի, Ծաղկեվանք, Դրոյի գերեզման, Ապարանի տառերի պուրակ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/100064615335914/videos/2003977693387950 ),
- Էքսկուրսիա՝ Առինջի Լեվոնի Աստվածածին քարանձավ,Առինջի Գետարգելի եկեղեցի, Գ.Ծառուկյանի Սբ.Հովհաննես եկեղեցի, Պողոս-Պետրոս, Ջրվեժի Սբ. Կաթողիկե եկեղեցի (տե՛ս հետևյալ հղմամբ՝ ),
- Էքսկուրսիա՝ Վաղարշապատ, Սբ. Հռիփսիմե-Շողակաթ-Գայանե-Էջմիածին մայրավանք, Զվարթնոց (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/100064615335914/videos/849630346686163 ),
- Էքսկուրսիա՝ Լոռի, Վանաձորի Սբ.Ամենակատար եկեղեցի, Ստեփանավան, Դենդրոպարկ, Ջրաշուշանների լիճ, Սբ.Նիկոլայ Եկեղեցի(տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/100064615335914/videos/1220197519214602 ),
- «Հմուտ ձեռքեր» խմբակի ցուցահանդես-միջոցառումը (տե՛ս հետևյալ հղմամբ՝ Էքսկուրսիա՝ Դիլիջան, Հաղարծին, Գոշավանք (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/100064615335914/videos/490531323896284 ),
- Էքսկուրսիա՝ Թալին, Դաշտադեմ ամրոց, Սբ. Կաթոլիկե եկեղեցի (տե՛ս հետևյալ հղմամբ՝ *https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid02XeADx2BYdx3dptSa8LPrYackYMDf3bDUP3XhDhrpBbkkpfBK1m3LJGiuJyW9jmSDl&id=100081543423963 ),*
- Հայ եկեղեցու պատմություն, կերպարվեստ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/photo?fbid=953746146789221&set=pcb.953746216789214 ),
- Խոհարարական խմբակ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/100064615335914/videos/2118003738573944 ),
- Պարաթերապիա (տե՛ս հետևյալ հղմամբ ), https://www.facebook.com/100064615335914/videos/890404692483901 ),
- Երգ (տե՛ս հետևյալ հղմամբ https://www.facebook.com/100064615335914/videos/1655843055204497)
- Հոգեբանի հետ խմբային աշխատանքներից կադրեր (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/100064615335914/videos/911113457716996 ) ),

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խոհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում,
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար**:

Հաշվետու ժամանակահատվածում աշխատակազմի կարողությունների ու գիտելիքների շարունակական զարգացումն ապահովելու համար.

Ցերեկային կենտրոնների սոցիալական աշխատողները, բուժքույրերը, մասնակցել են Եվրոխորհուրդի գրասենյակի կողմից կազմակերպած դասընթացին. «Սթրեսի կառավարում» թեմայով:

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ցերեկային խնամքի կենտրոնի շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 50/51 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 34 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 4 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 3 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 0 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 4 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 47 |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | 39 |
| 3. | Կարիքի գնահատում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 39 |
| 4. | Աշխատանքային/արտթերապիայի որոշակի տեսակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 41 |
| 5. | Խմբակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 51 |
| 5.1 | Հայ եկեղեցու պատմություն, կերպարվեստ | 16 |
| 5.2 | Կինեզոլոգիա | 25 |
| 5.3 | Հմուտ ձեռքեր | 20 |
| 5.4 | Երգ | 17 |
| 5.5 | Խոհարարական | 12 |
| 5.6 | Առողջապահական | 18 |
| 5.7 | Գրական | 13 |
| 5.8 | Քննարկումների ակումբ | 8 |
| 6. | Մշակութային միջոցառումների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 51 |
| 6.1 | Այդ թվում՝ կենտրոնից դուրս | 34 |
| 7. | Այլ ծառայություն (նշել) Բաղնիքի ծառայություն | 1 |

Կազմակերպության ղեկավար *Երվանդ Մխիթարյան* «01» 07.2024թ

(ստորագրություն, անուն,ազգանուն)